



Լևոն Շանյթ

Երագ օրեր

Գիշերօթիկի մը յուշատետրէն

«ՕՐԸ ՕՐԻՆ»

Յունիս 8, Դելիշան

Արթնցածիս պէս պատուհան վազեցի: Թէն արեւը բաւական բարձր էր, սակայն սենեակս դեռ բոլորովին շուքի ու գովութեան մէջ էր: Տուներնիս լեռան լանջին է փակած, ուրկէ քանի մը ծերունի ծառեր իրենց ստուերներուն ուղկանը վրանիս կնեւտն:

Մեզի կից տուն չկայ, կատարեալ կղզի մը, որը գրկող ծովը առատ դալարն է: Իսկ մեզի ամենէն մօտիկ եղող բնակարանը ուրիշ պզտիկ ամառանոց մըն է, մերինին պէս ճերմակ, մերինին պէս նոր ու մերինին պէս մեկուսի: Ճիշտ ին երագած վայրերէ մէկը, գիւղին ծայրը, կոնակը անտառին, գառիվայրի կուրծքին, բնութեան ծոցը:

Ինը երկար ամիսներ դպրոցի չորս պատերուն մէջ ճգնելէն ետքը՝ ի՛նչ ուրախութիւն է զգալ ժայտերուն դրացնութիւնը պատշգամին դէմ, գետակին երաժշտութիւնը ձորի խորքէն պատուհանիդ տակ եւ ծառերուն փսփսուքը սենեակիդ վրան:

Իսկ երեկ իրիկուան իմ Դելիշան հասնիլս ուղղակի նկարելու բան էր: Հագիւ վար ցատկեցի փոստի սայլակէն, որ ինքզինքս պաշարուած գտայ երեք գոյգ

բազուկներով: Հօրեղբայրս իր վաթսուն տարիներու ծերութեամբ վիզս փաթթուած կխնդար. հօրեղբօրս կինը կուլար յուզումէն. իսկ պարոն Մկրտիչը իր ոսկրոտ ձեռքին մէջ դաստակս պինդ մը սեղմած՝ ոչ մէկ կերպ բաց ձգելու տրամադրութիւն ցոյց չէր տար. քիչ մը հեռուն ալ կեցեր էր Հոռոբսին, որ շհամարձակելով մօտենալ՝ բերանը բաց կժպտէր՝ ցուցադրելով մէջընդմէջ ասկռաներու գոյգ շարք մը. մինչ իմ նախորդ ամառուան մտերիմ շնիկս՝ աւելի համարձակ՝ հագուստներս կհոտոտար անհանգիստ պոչը շարժելով:

Դեռ այսօր ալ մինչեւ կէսօր տնեցիք ինծմէ հագի կարօտնին առին: Հօրեղբայրս չէր ձգեր, որ քովէն հեռանամ: Ինծի կարդացնել տուաւ հօրմէս ու ընդհանրապէս Վանէն ստացած բոլոր վերջին նամակներս: Չնայելով որ քառասուն տարիէն աւելի է Թիմիս կկենայ, հո՛ն է գործի ու դիրքի տէր դարձած եւ հոն ալ ամոսնացած, բայց եւ այնպէս միշտ թարմ ու խոր կարօտով կյիշէ Վանը, որ սովորաբար «մեր դրախտը» կանուանէ:

Ճաշէն ետքը գացի գիղ Միքայէլը գտնելու. դուրս եկաւ, որ ՆորնԲայագիտ է գացեր. մե՛ղք. ընկեր մը կունենայի, մանաւանդ տեղացի ալ էր:

Վերադարձին մեր տան մօտերը արքունի մեծ ճամփուն վրայ երկու կին տեսայ, որ թեւեթեւի դէպի ինծի կուգային: Մէկը տարիքը առած ու վայելչատես տիկին մըն էր, թեւակիցը տասնեօթի շուրջ թարմ ու աղուոր աղջիկ մը:

Անոնք ալ ինծի կդիտէին: Երբ իրարու մօտեցանք՝ աղջիկը սկսաւ շեշտակի աչքերուս մէջ նայիլ. ես կարմրեցայ եւ հայեացքս փախցուցի: Անցնելուս պէս հետաքրքրութիւն մը ունեցայ ետ նայելու, բայց ինքնասիրութեանս չձգեցի ու ճամփաս շարունակեցի:

Դէպքը ինքնըստինքեան ոչինչ ու անարժէք, բայց ինծի սաստիկ գայրացուց: Ի՛նչ հիմար բնատրութիւն է. ի՛նչ կայ այսպէս կարմրելու, երբ աղջիկ մը աչքը աչքերուս կնետէ: Տարօրինակ հակասութիւններ կան հոգեկան կազմիս մէջ. մէյ մը անչկոտ եմ, տղայամիտ ու անհամարձակ, մէյ մըն ալ հանկարծ՝ հասուն, հանդուգն ու անգուսպ. կարծես ոչկամէկ գիծը միւսին չի բռներ:

Յունիս 9

Առտուն դեռ շատ կանուխ էր, որ ելայ պատշգամ: Հագի ինձմէ քանի մը տասնեակ քայլ անդին արքունի խճուղին է ու գետը, որոնք ձորին մէջ թելթելի տուած կվազեն դէպի Աղստեի դաշտը:

Օդը մաքուր էր ու հստակ՝ աղջկան մը առաջին համբոյրին պէս, զով ու թարմ՝ քունէն նոր ելած ծովու առաջին ժպիտին պէս: Թորքերս կեանք կներշնչէին:

Պատշգամի երկու կողմէն դէի վար հակուած ծառերուն խումբը հովի իրաքանջիւր քմահաճոյքէն իրարու գիրկ կնետուէին ու կփսփսային երեակայութիւն գրգռող փսփսուքով մը: Վարը խտտերուն ու թփերուն մէջ ծղցիղը սիրերգ մը կծղրտար, որ ո՛չ ծայր ունէր, ո՛չ վերջ. անդին գետն էր, որ մտածկոտ մարդու մը նման անընդհատ կկրկնէր միեւնոյն երգին միեւնոյն կտորը: Ամառնային համանուագ մը:

Եւ ես գրաւուած՝ անձնատուր էի ամբողջովին բնութեան այդ ծիծաղկոտ երաժշտութեանը, երբ հանկարծ մօտէն բարձր ու զուարթ քրքիջ մը հոգիս իր կողմը քաշեց. բնութեան երգին մէկ կտո՞րն էր: Այն կողմ դարձայ ու մեծ եղաւ զարմանքս, երբ երեկուան աղջիկը ճանչցայ: Միայն այն տարբերութեամբ, որ հագուած էր շատ պարզ եւ փոխանակ տարիքոտ կնոջ մը, հետը երիտասարդ սպասուիի մը ունէր:

Անշուշտ նշմարած էր ինձի. գոնէ ես այդպէս կարծեցի, թէ եւ աղջիկը առանց մեր կողմն անգամ նայելու՝ թռչկոտելով ու բարձրեբարձր եւ ռուսերէն շաղակրատելով ու խնդալով՝ ձորէն վար աներեւոյթ եղաւ իր ընկերուիիին հետ:

Մոլորուն նայուածքով կհետեւէի իրեն մինչեւ աչքէս կորուսի, թէ եւ դեռ երկար կլսուէր իր հնչուն ծիծաղը եւ առոյգ ձայնը, որ հետզհետէ սկսաւ թուլնալ եւ վերջնականապէս հալեցաւ գետի կարկաչին մէջ: Ի՛նչ կենսուրախ աղջիկ է. եւ ո՞վ է արդեօք:

Հոռոբսին թեյ բերաւ: Կերպ մը նկարագրեցի երկու աղջիկները եւ հարցուցի, թէ կճանչնա՞յ:

- Հասկցա՛, մեր դրացիներն են. տե՛ս, այն տունը կնաստին. և ըստ մեր տունէն քիչ մը աւելի վեր երեւոցող միակ ամառանոցը մտնանիշ ընելով: և Քոյր ու եղբայր են ու մայր մը. պզտիկ քոյր մըն ալ ունին: Մեր տիկինը լաւ կճանչնայ. աղէկ մարդիկ են, միայն աղջիկը քիչ մը□

- Է՞. և հարցուցի հետաքրքիր:

- Շատ է ուսումնարանի պէս. և լրացուց իր խօսքը խնդալով:

- Ի՞նչ. ուսումնարանը գէ՞շ է. չէ՞ որ ես ալ ուսումնարանէ կուգամ:

- Դուն մանչ ես. ուրիշ է. աղջիկներուն շատ ուսումն ու շատ բացուիլը աղէկ չի գար:

Թեյամանը վերցուց ու հեռացաւ: Իսկ ես սկսայ մտածել, ո՛չ թէ Հոռոբսիի կանանց կրթութեան աննպաստ փիլիսոփայութեանը, այլ պարզապէս իր տուած տեղեկութիւններուն վրայ: Եւ քիչևքիչ ընկղմեցայ անրջանքի մէջ:

Այդ աղջիկը երեկ ու այսօր երկու հանդիպումներուն ալ տարօրինակ տպաւորութիւն մը ըրաւ վրաս: Միւս կողմէն կրթուած է եղեր, գեղեցիկ է ու իմ անմիջական դրացուիին այս գեղեցիկ բնութեան ծոցը: Երազանքիս մէջ ինձի այնպէս կթուի արդէն, որ բռն կերպով կսիրեմ այդ աղջիկը. եւ երեւակայութիւնս պահ մը շատ հեռուները կսաւառնի օդային սիրոյ թետերուն վրայ: Այսպէս է իմ դիւրագգաց բնաւորութիւնս: Մէկ կողմէն զգացումներս հոյակապ շէնքեր կկերտեն ոչինչէն, այսինքն երբ մէջտեղը ոչինչ չկայ, մինչդեռ միւս կողմէն մշտապէս դժգոհ եմ ու հիասթափ եղածէն ու իրականէն: Գիտեմ, բաւական է քիչ մը մօտիկէն շփուիմ այդ աղջկան, որ իսկոյն պատռի հմայքին քողը:

Անձկոտ անձրեւի սպասող մթնոլորտին մէջ հովերու քմայքէն ամպեր կխոնին. փայլակ ու որոտ: Բայց նոյն հովերը կփչեն նորէն, ամպերը կցրուին, լոյսերը կցնդին եւ նորէն խաղաղ ու միակերպ կապոյտն է կեանքիս երկնքին վրայ:

Յունիս 11

Հօրեղբայրս այսօր Թիֆլի, վերադարձա՛ գործերը ձգել շի կրնար: Տունը ամենքն
ալ կոտորտուած են քիչ մը: Իսկ ես ճշմարիտը խօսելով իր մեկնումէն այնքան ալ
դժգոհ չեմ. թեւերս չափ մը աւելի ազատութիւն կստանան. կդառնամ տան
Էրիկնմարդը. քանի որ պարոն Մկրտիչը տան մէջ իր սեփական ձայնը չունի եւ
ամէն բանի մէջ կկրկնէ իր քորջը ըսածը: Մինչդեռ հօրեղբօրս կինը, կտեսնեմ, որ
իմ խօսքերու մասնատր կարեւորութիւն կուտայ:

Երկու օր է կկարդամ Շիլլերի «ԴոննԿարլոսը»: Ի՛նչ շքեղ տիպար մըն է այ
Մարքիզ Պոզան, այդ անձոնուէր հայրենասէրը, այդ խմորուած մեծ մարդը. եւ
անոր փաթթուած այդ իդեական անփորձ երիտասարդը, սիրոյ ու կեանքի
առաջին շփման տակ ոգեւորուած ազնիւ ԴոննԿարլոսը: Կսիրեմ ես այ
դմարդիկը՝ այդ երկու գաղափարական տիպարները. եւ կարծս նոր չէ, որ անոնց
հետ կծանօթանամ. անոնց ձայնն ու խօսքը կարծես հինէն իմ հոգիս մէջ կհնչէր:

Իրիկունը ուշ ատեն երկար կշրէի մեր տան դիմացը կանանչներուն վրայ: Մութ
գիշեր էր: Ծառերուն տակը բանտուած գաղջ ու բուրումնալից օդը հափրեցուց
ինձի. մանաւանդ դոննԿարլոսի ազդեցութիւնն ալ դեռ բոլորովին վրայես անցած
չէ:

Միտքս աշխատիլ սկսաւ. ու ապագայի ծրագիրներս վերակենդանացան:
Ծննդավայրս եմ արդէն գործի ու աշխատանքի վրայ, ո՛չ թէ հիմիկուան պէս
միայն ստացող մը, պատրաստուող մը: Ու կխրիմ, կխրիմ ծրագիրներու
նրբութիւններուն ու մանրամասնութիւններուն մէջ:

Երկի՛նք, ի՛նչ սուրբ իղձեր կան կրծքիս տակ, ի՛նչ ոգեւորութիւն կտենչամ եւ ի՛նչ
անձնամոռ լեցուն կեանք: Բայց ունենալո՞ւ եմ արդեօք: Ո՞վ գիտէ: Գուցէ իմ
կեանքս ալ այս անրջանքէն անդին պիտի չանցնի: Գուցէ այս բոլորը անփորձ ու
դեռ թամր տարիքի ցնորքներ են լոկ, որուն պիտի յաջորդէ սանձուած
հասունութիւնը. եւ ես ալ պիտի դառնամ այն հարիւրաւորնհազարաւոր
միջակնհասարակ էակներէն մէկը, որոնք ամէն տեղ կվխտան, որոնք միայն
կուտեն ապրելու համար եւ կապրին միայն ուտելու համար:

Եւ այս բոլո՛րը, որ հիմա աշխարհը աչքիս գեղեցիկ կցուցնէ եւ որ կեանքիս
խորհուրդ ու հրապոյր կուտայ, այս բոլո՛րը, որ զգացումներու մէջ ազնութիւն

կթափէ եւ սրտիս գաղափարականի ծարակ կուտայ, ա՛, այս բոլորը գուցէ ցնդի պիտի կեանքիս մատղաշ օրերուն հետ: Չէ՞ որ ամենքն ալ ականջիս այդ երգը կկրկնեն. գուցէ եւ իրաւունք ունին. միթէ իմ անփորձութիւնս այդքան մարդոց փորձառութենէն աւելի վե՞ր է:

Եւ ինչո՞ւ կպահաջնեն, որ ուրիշներէն տարբեր, ուրիշներէն բարձր ըլլամ. եւ իմ ո՞ր առաւելութիւններու վրայ հենուած. ես ալ այդ մարդ ըսուած էակի նոյն հասարակ մէկ նմուշք չե՞մ:

Ո՛հ, Աստուա՛ծ իմ, ի՛նչ սարսափ այս մտածումները: Որքա՛ն դառնութիւն, որքա՛ն թոյն կայ այս խոհերուն տակ, որ ամբողջ հոգիս եւ բոլոր ոգեւորութիւնս չորցնել կսպառնայ: Ո՛չ. չեմ կրնար հաւտալ, անկարելի՛ է. ո՛չ, ես չեմ կրնարն ոչինչ մը դառնալ:

Յունիս 12

Այս քանի մը օրուան մէջ շրջակայքը տեղ չնմաց չափշփեցի: Մեր ետեւի լեռը իր թզուկ անտառով, վարը ձորը իր գետակով, մեր պատշգամի դիմացէն վագոդ արքունի խճուղին իր վերստի սիւներով, այս բոլորը իմ սեփական տունս է կարծես:

Առտուկիրիկուն շատ աղեկ է. ցերեկներն է քիչ մը ֆանֆարլի: Տնեցիք կքնանան, տունը կլռէ. միւս կողմէն ալ տաքը կճնշէ: Ընթերցանութիւնն է միակ ընկերս եւ սփոփիչս: Հետս սնդուկ մը գիրք եմ բերաց. ընելու շա՛տ գործ:

Գեղեցիկ դրացուհիիս գրեթէ ամէն օր կհանդիպիմ կա՛մ առտուները կա՛մ իրիկունը շրջագայութեանս միջոցին: Նո՛յնն է միշտ. զարմանալի բնատրութիւն մը. եռուն ու համարձակ. իսկը ազատ թռչուն մը:

Կզգամ, որ իր ուշադրութիւնը գրաւած եմ:

Անցած օր աղախնի յարդէ գլխարկը հափշտակած կվագեր՝ հեւալով, խնդալով, ճչալով. ու քովես այնքան մօտիկ անցաւ, որ օւղընկոյնի փափուկ հոտ մը դէմքս պարուրեց: Նախորդ իրիկունն ալ պզտիկ քրոջը ձեռքէն շրջանակը առած կդարձնէր՝ զուարթ ու շիկնած ետեւէն վագելով. եթէ չզգուշանայի՝ շրջանակը

նութեան վրայէն պիտի անցնէր. աղջիկը չոր ժպիտով անցողակի «պարոն՝ն»
մը ըսաւ ու շարունակեց:

Երէկ իրիկուն ալ վարը՝ ձորը տեսայ հեռուէն՝ իր եղբօր հետ էր, որ երեսունի
մօտիկ գրաւիչ երիտասարդ մըն է, արուեստագէտի երկար մագերով եւ
անգլիական այտնօրութեամբով: Աղջիկը ռուսերէն օպերետի մը մէկ սիրուն կտորը
կերգէր. եւ աղուոր կերգէր. շատ անուշ եկաւ ինծի այդ մեներգը գետակի ձայն
պահող երգակցութեան մէջէն:

Ընդհանրապէս շատ օդային եւ խորհրդաւոր տպաւորութիւն մը կընէ վրաս. եւ
բնական կերպով հետաքրքրութիւն առաջացծ է մէջս. երբ դուրս կելլեմ պտոյտի՝
միշտ բեի հանդպելու տարտամ յոյս մը ունիմ. թէ երբ կհանդիպիմ՝ ճնշում
կզգամ իր հանդուգն կեցուածքէն ու նայուածքէն. եւ իր խոր ու քաշող աչքերէն
խուսափելու համար բանով մը զբաղուիլ կձեռնարկեմ:

Յունիս 13

Ա՛, ապուշ եմ ես, կատարեալ ապուշ:

Իրիկուան դէմ հօրեղբօրս կնոջ հետ փոքր պտոյտի մըն էինք ելած. գացինք
մինչեւ գիւղ: Մեր վերադարձին՝ հերոսուհիիս տան առջեւէն անցնելու ատեն՝
տեսանք, որ ծառերուն տակ սեղանի մը քով նստած՝ մայր ու աղջիկ կկարէին:

Հարկ եղաւ մօտենանք եւ հօրեղբօրս կինը ինծի ներկայացուց.

- Անուանուս եղբօր որդին՝ Երուանդ:

- Երուանդ. և բացականչեց իսկոյն օրիորդը ռուսական արտասանութեամբ եւ
կարծես մեծ զարմանքով:

Իրենց անունը Շամիրեան էր. տիկին Նատալիա եւ օրիորդ Վարդուհի: Այո՛,
«Վարդուհի» եւ ո՛չ թէ Ռոզա. ուրեմն գոնէ անունը մնացել էր վրան հայ, շատ
զարմանալի կերպով:

- Կարծեմ մէկներկու անգամ ճամփուն վրայ իրար հանդպելու պատեհութիւնը ունեցանք. և ըստ տիկին Նատալիա ծամծամած հայերէնով մը եւ ռուսերէնի հետ խառն բառերով, որոնցմէ ես ինքս գլխուս մէջ ստիպուած էի կանոնաւոր նախադասութիւններ կազմելու:

- Թէեւ ինքը կարծեմ մեզի տեսնել չուզեց. և ատելցուց օրիորդը կատակ հենգութեամբ մը եւ բոլորովին ռուսերէն:

- Ինչպէ՞ս թէ. և հարցուցի ես շուացած այս տեսակ անսպասելի հարձակման մը առջեւ:

- Անշուշտ չէ գիտցած, որ ծանօթ ենք ու դրացի. և պաշտպանեց ինձի հօրեղբօրս կինը:

Ես հոգիս մէջ ատելի չարացայ այդ պաշտպանողականէն:

և Ո՛չ, տիկին: տեսէ՛ք, կարմրեցաւ. ըսել է հանցաւոր է. և բացականչեց օրիորդը մատովը ինձի ցոյց տալով ու բարձրաձայն քրքջալով:

Ես ինձի ատելի անհարմար գգացի, թէեւ կիսնդայի: Բարեբախտաբար տիկիները խօսքի բռնուեցան, անոնք սովորաբար իրարու հետ վրացերէն կխօսէին:

Իսկ օրիորդը այդ միջոցին առաւ սեղանէն իր ձեռագործը ու սկսաւ արագ աշխատիլ. բայց հանկարծ նետեց ծունկերուն եւ նորէն ինձի դիմեց ժպտելով.

- Ինչո՞ւ չէք խօսիր, պարո՛ն:

- Տիկիները կլսեն. և ըսի պատասխան մը տուած ըլլալու համար:

- Ուրեմն վրացեէդն գիտէք:

Այ ետ դառնալ չէի կրնար. ստիպուած էի ստելու.

- Շատ քիչ:

Բայց իսկոյն ալ ստելուս գոջացի ու գայրոյթ զգացի ինքս իմ դէսս: Միեւնոյն ժամանակ ողեղս տակնուվրայ կրնէի խօսլու հարմար նիւթ մը ճարելու համար: Ուզեցի օղի մասին խօսիմ՝ ինծի ծիծաղելի թուեցաւ. ամառանոցի մասին խօսիլը շատ էր սովորական: Եւ հանկարծ մէկենիմէկ հարցուցի.

- Արդեօք կրնա՞ն հետաքրքրուիլ. օրիորդը ո՞ր դպրոցն է հաճախած:

Աղջիկը գսպուած ժպիտով մը երեսս նայեցաւ ու պատասխանեց.

- Թիֆլիսի երրորդ աղջկանց գիմնազիոնը:

- Աւարտա՞ծ էք միթէ:

- Ո՛չ: Ինչպէ՞ս կրեսն հայերէն: Ներեցէ՛ք, հայերէն աղեկ չգիտեմ: Այս օմեռ վերընթեր դասարանն էի. և աւարտեց խօսքը ռուսերէն:

- Ա՛, ճիշտ ինծի պէս:

- Իրա՞ւ. բախտակից ենք ուրեմն:

Եւ նորէն ձեռագործը վերցուց ծունկերուն վրայէն: Տիկիները արագ ու շարունակ կխօսէին իրարու ձայն ընդհատելով: Ես հեռուն կնայէի ծառերուն մէջէն:

Բայց կտեսնէի, որ աղջիկը իր քննող աչքերը հաճախ դէմքիս կգամէր եւ տարօրինակ ժպիտս մը ունէր շրթունքին անկիւնը: Այո՛, կըմբռնէի, որ վրաս գերագանցութիւն մը ունէր:

- Երեւի պարոնը աւելի խորհիլ կսիրէ, քան խօսիլ. փիլիսոփայորէն. և ըսաւ աղջիկը վայրկեան մը ետքը:

- Իսկ դուք փիլիսոփայութենէն բնաւ չէք ախորժիր, ըստ երեւոյթին. և պատասխանեցի իրեն ակամայ քիչ մը աւելի խիստ:

- Ո՛չ, ինչո՞ւ. ամէն բան իր տեղն ունի. եւ վերջապէս ես միայն կատակ ըրի:

Վերջին նախադասութիւնը ինծի համոզեց, որ վշտանալս նկատած էր:
Յօրեղբօրս կինը հրաժեշտի համար ոտքի ելաւ. կարծես բանտէն կազատուէի:

Թոթուեցի օրիորդին ձեռքը:

- Ասկէ ետքը երբ իրարու հանդպինք՝ կյուսամ, որ գաւազաննուդ կոթը գննելու հարկը պիտի չգգաք, և ըսաւ աղջիկը խորքին մէջ շատ աղուոր ժպիտով մը եւ ամուր ձեռքս սեղմելով:

Աղջկան մը առջեւ ծաղրելի ըլլալէս խայթուած շտապեցի շիտակ սենեակս. եւ մահճակալիս վրայ փռուած երկար ատեն կմտածէի: Եզրակացութիւնս շատ պարզ էր.

«Ես ապուշ եմ, ապուշ»:

Յունիս 14

Արթնցայ թէ չէ՝ միտքս նոյն խնդրով զբաղիլ սկսաւ: Սակայն թարմ տպատրութեան ճնշիչ ազդեցութենէն կազդուրուած, նոր օրուան նոր լոյսին հետ ամէն բան հաճելի կո դմէն դատելու տրամադիր եւ խորունկ քունով մը ուժովցած, խոհերս նոր ուղղութիւն մը առին:

Սկսած էր երեկուան հակազդեցութիւնը: Եսս էր, որ կբողոքէր: Վերջապէս ի՞նչն էր ինծի այդպէս վրդոված: Աղջկան հետ շնորհքով չխօսելո՞ւս համար: Սակայն աղջկան մը հետ նորևնոր ծանօթացած ի՞նչ պիտի խօսէի իր հետ: Այո՛, խենթխենթ բերնիս եկածը իսկոյն գրուցել ես չեմ կրնար: Եւ վերջապէս որքան ինքը իրաւունք ունէր ինծմէ խօսիլ պահանջելու, այնքան ալ ես իրաւունք ունէի, դեռ բան մըն ալ ասելի, քանի որ իր հիւրն էի:

Ուրեմն հանցանքս պահանջկոտ չըլլալս է. չխածնելուս համար է, որ ինծի կխածնեն: Լաւ. դիւրնի է, ես ալ կրնամ խածնել եւ վախնամ շատ ասելի գէշ: Այդ աղջիկը համարձակ է ցաւցնելու աստիճան ձեռքս կսեղմէ. աղէ՛կ, ես ալ կրնամ լացնելու աստիճան սեղմել: Ան առանց քաշուելու բերնին եկածը երեսիս կըսէ. աղէ՛կ, ե՞ս ինչու պիտի քաշուիմ. մի՞թէ իմ քովս փտտած սրախօսութիւններ քիչ կան:

Անիկա ինձի առաջին անգամէն փիլիսոփայ կանուանէ ծաղրանքով. աղե՛կ, ես ինչո՞ւ իրեն չհասկցնեմ, որ ինքը աշխարհիկ սովորական աղջիկ մըն է, որուն հետ լուրջ խօսակցութեան մը բռնուիլ չես կրնար: Ահա՛ քեզի պարզութիւն եւ հանդգնութիւն: Սակայն ասիկա պիտի դառնայ կոպիտ վարմունք. որո՞ւ հոգ, քանի որ ասիկա կպահանջեն ինձմէ: Շատ ատիլի գերադասելի է կոպիտ ըլլալ, քան ծիծաղելի:

Սակայն յուզուիլն ատելորդ է, պէտք է մնալ պաղարիւն. եւ պիտի հարձակուիլ, հարձակման շենթարկուելու համար: Պարզապէս իր գէնքերը իր դէմ:

Այս որոշումներով զինուած՝ իրիկուան դէմ դուրս ելայ շրջելու, հաստատ համոզուած, որ աղջկան հանդիպելու էի: Եւ չխաբուեցայ:

Եղբօրը թելը մտած կուգար դէմս:

Երբ մօտեցանք՝ շիտակ դիմեցի օրիորդին եւ առանց սաստիկ կարմերլուս ուշ դարձնելու, պինդ մը սեղմեցի իր փափուկ ձեռքը, թէն անշուտ ո՛չ լացնելու աստիճան:

Քիչ մը զարմացած երեսս նայեցաւ, խնդաց եւ իսկոյն եղբայրն ու ինձի իրարու ներկայացուց:

- Կարծեմ պարոնը նկարիչ է. չափազանց ուրաշ եմ. և բացականչեցի ես:

- Եւ բացականչութիւնս երեւի պարոնին հաճելի եղաւ, որովհետեւ բացաձրակ համակրական շեշտով մըն էր, որ պատասխանեց.

- և Երեւի նկարչութիւնը դո՛ւք ալ կսիրէք:

- Անտարակո՛յս. գեղարուեստներու սիրահար եմ, թէն դժբախտաբար բոլորէն ալ բոբիկ: Ըէ՛ք խնդրեմ, ատիլ տեսարաններո՞վ կգբաղիք, թէ.

- Գիտէ՛ք, բարեկա՛մս, ես իրբեւ արհեստաւոր նկարիչ չեմ. արդէն արհեստաւորներէն չեմ ալ ախորժիր, որովհետեւ շահի համար կաշխատին, իսկ շահը ստեղծագործութիւնը կսպաննէ: Ես պարզ նկարչութեան սիրող մըն եմ, որ

միայն արուեստի սիրուն համար կնկարեն: Եւ այդ պատճառով է, որ առանց կեղծ համեստութեան, նկարներս անհամեմատ առաւելութիւն մը ունին:

- Ես ուզեցի միայն իմանամ□

- Պետերբուրգ ձմեռուան տեսարան մը նկարած եմ, որ ամբողջ մայրաքաղաքի ուշադրութիւնը գրաւեց:

- Հա՛, ուրեմն տեսարաններով կգբաղուիք:

- Նաե՛ւ տեսարաններով. Կովկասէն լեռնանկար մը ունիմ, որ հիմա իշխան Կալիցինի կեդրոնական դահլիճին մէջն է կախուած. իշխանը իմ մտերիմ բարեկամս է եւ նկարը ես նուիրեմ եմ իրեն: Կասպից ծովէն Էտիոպ մը ունեի, որ երբ Այգափովսկին տեսակ՝ մատ խածաւ: Ամբողջ երկու օր իր հիւրը եղայ եւ ի՛նչ հրաշալի մարդ է: ինչպէ՛ս իսկական արուեստը ճանչցող ու գնահատող: Գիտե՞ք, Այվազովսկին ինքը մէկերկու թերութիւններ ունի. ես իրեն ալ արդէն ըսի. չժխտեց. բայց ո՞վ է նկատողը: Անուն է, անգամ մը որ ելլէ, ալ կերթայ:

- Դուք նկարչութիւնը ո՞ր էք ուսած:

- Եղած եմ Պետերբուրգ, Մոսկվա, Օդեսա, տարի մըն ալ նկարչութեան ծննդավայրը՝ Իտալիա: Օդեսա եղած միջոցիս գնչոհիիի մը գլուխ նկարեց, ի որ գորավարուիին ուղղակի պատկերին վրայ սիրահարեցաւ. գորավար Մարտինովի տիկինը. գուցէ լսած էք՝ Մոսկվայի ամենէն գեղեցիկ կինը. գեղեցկութիւնն է, որ գիտէ գեղեցկութիւնը թափանցել. ես իրեն տեսեր եմ իր ամատանորը եւ tՍտելՈւտՍտե. նշանատր կին է:

- Սրտանց կշնորհատրեմ ձեր յաջողութիւնները. և ըսի ես եւ դառնալով քրոջը ատելցուցի.

- Սակայն, օրիո՛րդ, չէք խօսիր: Երեւի այսօր ալ դուխ փիլիսոփայութեան միտում մը ունիք:

- Ո՛չ. և պատասխանեց ժպտալով. և եղբօրս քաջագործութիւնները կլսեմ:

- Ինչպես երեկ ես՝ տիկիներուն վրացերէնը:

Ջգացի, որ համեմատութիւնս շատ համով փախաւ եւ աղջկան վարանումէն օգտուելով շարունակեցի.

- Իսկ ինձի այնպէս թուեցաւ, թէ դուք ալ, ինչպէս ես երեկ, խօսելու նիւթ մը ճարելու կդժուարանք. իսկ նկարչութենէն արդէն կշտացած էք երեւի, այնքան խօսած էք ձեր եղբօր հետ:

- Ուրեմն երեկ նիւթ չճարելն՞դ համար չէիք խօսէր:

- Այսինքն, ինչպէս ըսեմ: Շատ սովորական ու չնչին բանի մը վրայ խօսիլ առաջին անգամ տեսած անձի մը հետ՝ շատ հրապուրիչ բան չէ. իսկ եթէ քիչ մը լուրջ խնդիր հարուցանէի՝ դուք պիտի դժգոհ մնայիք:

- Ինչո՞ւ. ձեզի ո՞վ ըսաւ:

- Որովհետեւ ամէն քիչ թէ շատ լուրջ բան ձեր խառնուածքին համար փիլիսոփայութիւն է, ուրկէ բնականաբար չէք ախորժիր:

- Շատ աննախանձելի գաղափար մըն էք կազմած իմ վրաս. և պատասխանեց խնդալով եւ սկսաւ խաղալ հովանոցի ժապաւէնին հետ:

- Շիտաը փիլիսոփայութենէն ես ալ չեմ ախորժիր. և մէջ նետուեցաւ եղբայրը: և Ատոնք բոլորն ալ կենդանի իրականութիւնը թողած օղային տեսութիւններու ետեւէն վազող մարդիկ են: Ես իմ մէկ ուրուանկարս անոնց ամբողջ փիլիսոփայութեան հետ չեմ փոխեր:

- Ձեր ո՞ր ուրուանկարը. և հարցուցի ես վերին աստիճանիմիամիտ դէմքով մը եւ գրեթէ ակամայ, ինքնաբերաբար:

- Որեւէ մէկը. որը որ կուզէք. և եղաւ իր անփոյթ ու ինքնավստահ պատասխանը:

Ես ուզեցի մոռցնել տամ նախորդ հարցիս մէջ խլրտող հեզութիւնը ու դիմեցի քրոջը.

- Իսկ դո՞ւք, օրիո՞րդ, դո՞ւք ալ միեւնոյն բարձր գաղափարը ունիք նկարչութեան մասին:

Եւ սկսաւ խօսքը նորէն նկարչութեան շուրջը դառնալ եւ ընդհանրապէս գեղարուեստական ստեղծագործութեան: Չգիտեմ ճշմարիտ, պարոն նկարչի մեծախօսութիւնը, թէ իմ ռազմական տրամադրութիւնս բարձրացուցեր էր խօսքիս ուժը. կզգայի, որ լաւ կխօսիմ, ե՛ւ խոր, ե՛ւ սուր:

Բաւական երկար միասին շրջագայլէն ետքը, երբ արդէն սկսած էր մթնել՝ կանգ առինք մեր տունէն ո՛չ շատ հեռու իրարմէ բաժնուելու համար:

- Ուրախ եմ ձեզի ծանօթանալու. թարմ հոգի ունիք եւ արուեստագէտի ճաշակ, և ըսաւ պարոն նկարիչը ձեռքս սեղմելով:

- Կտեսնէ՞ք՝ ինչ աղուոր վկայական ստացաք եղբորմես. և վրայ բերաւ քոյրը շատ զարմանալի շեշտով մը, երբ իրարու ձեռքը կսեղմէինք:

Ամբողջ իրիկունը նոյն աշխոյժ տրամադրութեան տակ էի: Երբ ուշ ատեն մտայ սենեակս ու վայրկեան մը նստեցայ մահճակալին ծայրը՝ ակամայ յիշեցի նախորդ գիշերը: Ի՛նչ մեծ տարբերութիւն երեկուան եւ այսօրուան խաղ ցած դերերուս մէջ. կարծես իրաւ որ երկու դերեր էին: Ամէն պարագայի պատահածէն դժգոհ չէի: Աղջիկը հիմա գիտէ, որ երբ ուզենամ՝ կրնամ իրեն պէս իր թեթեւ դերը խաղալ եւ եթէ չեմ խաղար՝ իմ ըմբռնումներս ու իմ բնատրութիւնս է պատճառը: Չէ՛, միանգամ ընդմիշտ վարկս ապահովուած է այդ աղջկան առջեւ:

Միայն կզարմանամ. ինչո՞ւ այսչափ հոգ աղջկան մը առջեւ հոգիս ու վարմունքս բարձրացնելու համար. սեռական հպարտութի՞ւնն է, որ ինձի կմղէ: